Պեմզաշեն

Վարչական ղեկավար՝ Աղասի Վարդանյան

Հեռ: 093 25 32 46

Մակերես՝ 23կմ²

Բնակչություն՝ 3100

Ինդեքս՝ 3020

syuzanna.pogosyan.1987@mail.ru

Պեմզաշենը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 6.3 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոն Գյումրուց՝ 26 կմ հարավ-արևելք, Արագած լեռան արևմտյան ստորոտում՝ ծովի մակարդակից 1780 մ բարձրության վրա: Պեմզաշենը հիմնադրվել է 1828-1830 թվականներին՝ Ալաշկերտից, Բասենից ու Մուշից գաղթածների կողմից:Նախկինում ունեցել է Կարմիրքենդ, Մածմուջու, Մախմուջուխ, Մահիուջուկ, Մահմուղջուկ, Մահմուտճուղ, Մայմուջուղ անվանումները: Պեմզաշեն է վերանվանվել 1940 թ-ին: 1958 թ-ից դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1995 թ-ի վարչատարածքային ռեֆորմից հետո դասվում է գյուղական բնակավայրերի շարքին: Բնակչությունը զբաղվում է բնական շինանյութերի հանույթով, ծխախոտագործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:Պեմզաշենն ունի վարդագույն և կարմիր տուֆ, պեմզա: Պեմզաշենում պահպանվել են V դարի բազիլիկ եկեղեցու հիմնապատերը, VI դարի եկեղեցիներ, Մակարավանքի սբ. Սիոն (1001 թ.), սբ. Աստվածածին (XVII դար), Առաքելոց

վանքի (XI դար) եկեղեցիները, XIII-XIV դարերի խաչքարեր։ Գյուղից հարավ-արևելք կան միջնադարյան բերդի պարիսպների հետքեր, գտնվել են մ.թ.ա. II հազարամյակի բրոնզե և երկաթե իրեր։ https://hushardzan.am/archives/2802